ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	թիվ 880	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Մոսկվա
Ընդունող մարմինը	Մաքսային միության հանձնաժողով	*Ընդունման ամսաթիվը*	09.12.2011
Ստորագրող մարմինը	Մաքսային միության հանձնաժողովի անդամներ	*Ստորագրման ամսաթիվը*	09.12.2011
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ՍՆՆԴԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 880

«ՍՆՆԴԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ (2013 թվականի հունիսի 25-ի խմբագրություն))

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշեց.

1. Ընդունել «Սննդային արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 021/2011) (կից ներկայացվում է):

2. Հաստատել.

2.1. Այն ստանդարտների ցանկը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքով ապահովվում է «Սննդային արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջների պահպանումը (կից ներկայացվում է):

2.2. Այն ստանդարտների ցանկը, որոնք ներառում են հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոնները և մեթոդները, այդ թվում՝ այն նմուշների ընտրության կանոնները, որոնք անհրաժեշտ են «Սննդային արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջները կիրառելու և կատարելու և արտադրանքի համապատասխանության գնահատումն (հաստատումը)

իրականացնելու համար (կից ներկայացվում է)։

3. Սահմանել.

3.1. «Սննդային արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ին՝ բացառությամբ կաթին և կաթնային արտադրանքին, մսին և մսային արտադրանքին, ձկանը և ձկնային արտադրանքին ու դրանց արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման և օգտահանման հետ կապված գործընթացներին ներկայացվող պահանջների։ Նախքան կաթին և կաթնային արտադրանքին, մսին և մսային արտադրանքին, ձկանը և ձկնային արտադրանքին ու դրանց արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման և օգտահանման հետ կապված գործընթացներին ներկայացվող պահանջները սահմանող Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրը այդպիսի արտադրանքի ու դրա արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման և օգտահանման գործընթացների նկատմամբ գործում են Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերի կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության դրույթները։

(3.1. ենթակետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ (2013 թվականի հունիսի 25-ի խմբագրություն))

3.2. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հաստատման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման առարկա հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ՝ արտադրանք), նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մտնելու օրը վավեր են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան մինչև 2015 թվականի փետրվարի 15-ը։ Նշված փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են նախքան սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավեր են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը։

Սկսած Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) մասին փաստաթղթերի տրամադրումը կամ ընդունումը չի թույլատրվում։

3.3. Նախքան 2015 թվականի փետրվարի 15-ը թույլատրվում են արտադրանքի արտադրությունը և շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը։

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը կամ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 386 որոշմանը համապատասխան։

Այդ արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում։

3.3.1. Մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը թույլատրվում է Մաքսային միության մաքսային տարածքում այն արտադրանքի արտադրությունն ու շրջանառության մեջ դնելը, որը նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը ենթակա չի եղել Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման)՝ առանց համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) մասին փաստաթղթերի և առանց համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով) մակնշման։

(3.3.1. *ենթակետն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշմամբ*)

3.4. Սույն Որոշման 3.2 ենթակետով նախատեսված՝ համապատասխանության գնահատման (հաստատման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության մեջ դրված արտադրանքի, ինչպես նաև սույն Որոշման 3.3.1 ենթակետում նշված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի պիտանիության ժամկետի

ընթացքում, որը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն:

(*Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ*)

3.5. Տեխնիկական կանոնակարգի 24-րդ հոդվածով նախատեսված կարգով մինչև 2015 թվականի փետրվարի 15-ը պետական գրանցման է ենթակա հետևյալ արտադրանքը.

1) սեղանի բնական հանքային ջուր,

2) տարաների մեջ շշալցված խմելու ջուր,

3) տոնուսը բարձրացնող խմիչքներ,

4) սննդային հավելումներ, համալիր սննդային հավելումներ, բուրավետիչներ, բուսական լուծամզուքներ՝ որպես համահոտային նյութեր և հումքային բաղադրիչներ, միկրոօրգանիզմների մեկնարկային կուլտուրաներ և բակտերիալ մերաններ, տեխնոլոգիական օժանդակ միջոցներ, այդ թվում՝ ֆերմենտային պատրաստուկներ,

5) սննդամթերք, որն ստացվել է գենային ինժեներիայի եղանակով ձևափոխված (տրանսգենային) օրգանիզմների օգտագործմամբ, այդ թվում՝ գենետիկորեն ձևափոխված միկրոօրգանիզմներ:

3.6. Արտադրական այն օբյեկտների մասին տվյալները, որոնք նախկինում սննդային արտադրանքի արտադրության (պատրաստման) գործունեություն են իրականացրել Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն, մուտք են արվում պետական ռեեստր առանց արտադրական օբյեկտների պետական գրանցման ընթացակարգերը Տեխնիկական կանոնակարգի համաձայն անցկացնելու:

3.7. Տեխնիկական կանոնակարգի 29-րդ հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում Մաքսային միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգը գործողության մեջ դնելու պահից:

3.8. Սննդային արտադրանքի առանձին տեսակների մասին Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրվանից Տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու միջոցով ճշգրտման ենթակա են սննդային արտադրանքի տեսակների անվանումները՝ այդպիսի տեխնիկական կանոնակարգերով նախատեսված սահմանումներին համապատասխան, իսկ բացառման ենթակա են այդպիսի տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կարգավորման առարկա հանդիսացող արտադրանքի անվտանգությանը ներկայացվող պահանջները (բացի ախտածին (պաթոգեն) միկրոօրգանիզմների և դրանց տոքսինների, միկոտոքսինների, տոքսիկ տարրերի, նիտրատների, ընդհանուր նշանակության թունաքիմիկատների (պեստիցիդների) քանակին, ինչպես նաև՝ ռադիոնուկլիդների թույլատրելի մակարդակին ներկայացվող պահանջներից), և անվտանգության միկրոկենսաբանական նորմատիվները (պայմանական ախտածին (պաթոգեն) միկրոօրգանիզմները):

4. Կողմերի հետ համատեղ՝ Հանձնաժողովի քարտուղարությանը.

4.1. Մինչև սննդային արտադրանքի առանձին տեսակների մասին Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրը Տեխնիկական կանոնակարգում ապահովել փոփոխությունների կատարումը՝ սույն Որոշման 3.8 ենթակետի համաձայն:

4.2. Պատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների պլանի նախագիծը, և սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված եռամսյա ժամկետում սահմանված կարգով դա ներկայացնել Հանձնաժողովի հաստատմանը՝ նախատեսելով՝

4.2.1. «Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ միասնական այն պահանջներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը պատրաստելը և մինչև 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնք հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման առարկան հանդիսացող արտադրանքին ներկայացվող պահանջները դրանցից բացառելու մասով,

4.2.2. «Մաքսային միության շրջանակներում միասնական փաստաթղթերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի միասնական ցանկում»

փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը պատրաստելը և մինչև 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 620 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման առարկան հանդիսացող արտադրանքը դրանից բացառելու մասով,

4.2.3. «Մաքսային միության մաքսային սահմանին և մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքների միասնական այն ցանկում» փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը պատրաստելը և մինչև 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման առարկան հանդիսացող արտադրանքը դրանից բացառելու մասով,

4.2.4. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) մասին փաստաթղթերը վերաձևակերպելու ընթացակարգի մեջ փոփոխություններ կատարելու նախագիծը պատրաստելը և սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը՝ Տեխնիկական կանոնակարգի պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) մասին փաստաթղթերի մասով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ցուցանիշները և (կամ) դրանց թույլատրելի մակարդակները չեն համընկնում Տեխնիկական կանոնակարգով նախատեսված ցուցանիշներին և (կամ) դրանց թույլատրելի մակարդակներին,

4.2.5. Միջպետական այն ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) և ներդրման մասին ծրագրի նախագիծը պատրաստելը և մինչև 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքով ապահովվում է Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը, ինչպես նաև՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ ներառող, այդ թվում՝ Տեխնիկական կանոնակարգը կիրառելու և կատարելու և արտադրանքի համապատասխանության գնահատումն (հաստատումը) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշների ընտրության կանոններ ներառող միջպետական ստանդարտների պահպանումը,

4.2.6. «Անասնաբուժական հսկողությանը (վերահսկողությանը) ենթակա ապրանքների միասնական ցանկում» փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը պատրաստելը և մինչև 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ՝ դրանից այն արտադրանքը բացառելու մասով, որը Տեխնիկական կանոնակարգի համաձայն առնչվում է կենդանական ծագման վերամշակված սննդային արտադրանքին,

4.2.7. «Օբյեկտների համատեղ ստուգումների անցկացման և անասնաբուժական հսկողությանը (վերահսկողությանը) ենթակա ապրանքների (արտադրանքի) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը պատրաստելը և մինչև 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 834 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի դրույթների հետ համապատասխանություն ապահովելու մասով,

4.2.8. «Կենդանական ծագման չվերամշակված պարենային հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող արտադրական օբյեկտների գրանցման ժամանակ ստուգումներ անցկացնելու չափորոշիչները սահմանելու մասին» հիմնադրույթի նախագիծը պատրաստելը և մինչև 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը։

5. Ռուսաստանյան կողմին՝ ստանդարտների կիրառման արդյունքների դիտանցման հիման վրա Կողմերի մասնակցությամբ ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկերի արդիականացման վերաբերյալ առաջարկություններ պատրաստելը և Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ոչ պակաս, քան տարին մեկ անգամ դրանք Հանձնաժողովի Քարտուղարությանը ներկայացնելը՝ սահմանված կարգով հաստատելու համար։

6. Կողմերին.

6.1. Մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը ապահովել Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման առարկան հանդիսացող արտադրանքի նկատմամբ իրենց պետությունների նորմատիվ իրավական ակտերը չկիրառելու

մասին համապատասխան որոշման ընդունումը:

6.2. Մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը ապահովել հավաստագրման մարմինների, համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներն իրականացնող փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) պատրաստվածությունը՝ Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասին հայտարարագրերի գրանցման գործընթացի իրականացմանը:

6.3. Մինչև Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նպատակով պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին, և դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

6.4. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նպատակով պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն Որոշման 3.2 - 3.4 ենթակետերը:

7. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրը:

Մաքսային միության հանձնաժողովի անդամները՝

Բելառուսի Հանրապետության կողմից	**Ղազախստանի Հանրապետության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության կողմից**
(Ստորագրություն)	(Ստորագրություն)	(Ստորագրություն)
Ս. ՌՈՒՄԱՍ	ՈՒ. ՇՈՒԿԵԵՎ	Ի. ՇՈՒՎԱԼՈՎ